Արձանագրության 3

Երևան քաղաքի Դավիթ Բեկ փողոցի հարևանությամբ գտնվող նորաստեղծ թաղամասի բնակելի տների կոյուղագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման « ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/53» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17.06.2019թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարտիրոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մարգարյան /գնահատող/, Բ. Տեր-Թովմասյան /գնահատող/, Ե. Մատասյան /բացող/, Ս. Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ա. Մարտիրոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Մարտիրոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/56 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Մարտիրոսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/56» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ին և ներկայացնել **Երևան քաղաքի Դավիթ Բեկ փողոցի հարևանությամբ գտնվող նորաստեղծ թաղամասի բնակելի տների կոյուղագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների** ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Մարտիրոսյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Մարտիրոսյան

Անդամներ՝ ---------- Ա. Մարգարյան

---------- Ս. Գևորգյան

---------- Ե. Մատասյան

---------- Բ. Տեր-Թովմասյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան